Հաշվետվություն

2024 թվականի օգոստոսի 6-ից 10-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Նյու Յորք, օգոստոսի 6-ից 10-ը

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտե (UN-GGIM)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 14-րդ նստաշրջանին

5. **Քննարկված թեմաները.**

- ✓ համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման ամրապնդման մեխանիզմներ,
- ✓ տարածաշրջանային կոմիտեների ներդրումը երկրատարածական տեղեկատվությանն առնչվող համաշխարհային գործունեության շրջանակներում,
- ✓ թեմատիկ ցանցերի ներդրումը երկրատարածական տեղեկատվությանն առնչվող համաշխարհային գործունեության շրջանակներում,
- ✓ երկրատարածական տեղեկատվության ապագա էկոհամակարգ,
- ✓ երկրատածական տեղեկատվության համալիր համակարգ,
- ✓ համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ,
- ✓ երկրատարածական տեղեկատվություն կիրառումը կայուն զարգացման և կլիմայի դիմացկունության ձևավորման համար,
- ✓ երկրատարածական տեղեկատվության և վիճակագրական և այլ համապատասխան տվյալների ինտեգրում,
- ✓ երկրատարածական տեղեկատվության կիրառումը հողօգտագործման և հողաշինարարության բնագավառում,

- ✓ երկրատարածական տեղեկատվությունը և ծառայությունները՝ ուղղված աղետների դեմ պայքարին,
- ✓ համալիր երկրատարածական տեղեկատվությունը ծովային ռեսուրսների վերաբերյալ,
- ✓ ստանդարտների ընդունում և իրականացում, երկրատարածական տեղեկատվության հարցերով զբաղվող համաշխարհային համայնքի համար,
- ✓ համագործակցություն ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների փորձագետների խմբի հետ,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տեղի ունեցավ հանդիպում Շվեդիայի քարտեզագրման, կադաստրային և հողերի գրանցման մարմնի (Lantmäteriet) ղեկավարի հետ: Ընդգծելով նախկինում իրականացված համատեղ ծրագրերի արդյունավետությունը, առաջարկվեց քայլեր ձեռնարկել փոխգործակցությունը վերսկսելու, համագործակցության նոր ուղություններ (Կոորդինատային համակարգերի, գեոդեզիական ցանցի արդիականացում ու զարգացում) սահմանելու նպատակով:

Նիդերլանդների Թագավորության Կադաստրի, հողերի հաշվառման և քարտեզագրման գործակալության (Kadaster) գործընկերների հետ հանդիպման ընթացքում ևս պայմանավորվածություն ձեռք բերվեց, հաշվի առնելով երկու երկրների ոլորտային գերատեսչությունների միջև համագործակցության դրական փորձը, ակտիվացնել շփումները նոր ծրագրերի մշակման և արդյունավետ իրականացման նպատակով:

Տեղի ունեցավ նաև հանդիպում Եվրոգեոգրաֆիքս ասոցացիայի ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում քննարկվեցին ասոցացիայի ընթացիկ հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՄԱԿ-ի համաշխարհային երկրատարածական տեղեկատվության կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) 14-րդ նստաշրջանում ի գիտություն է ընդունվել աշխատանքային խմբերի կողմից նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները, հաստատվել է 15-րդ նստաշրջանի նախնական օրակարգը և անցկացման ժամկետները:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է խթանել փորձագետների կոմիտեի (մասնավորապես՝ եվրոպական տարածաշրջանային կոմիտեի) և աշխատանքային խմբերի գործունեությունը, առավել հաճախակի կազմակերպել ոլորտային միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, մասնագիտական լայն շրջանակների ներգրավվածությամբ առցանց հանդիպումներ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան 09.08.2024 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 20.06.2024թ. N590-Ա

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար

4 Գործուղման վայրը Ամերիկայի Միացյալ նահանգներ, քաղաք Նյու Յորք

5 Գործուղման ժամկետները 06.08.2024-10.08.2024թթ.

6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2024 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս Ավիաճառայության արժեք (դրամ)	580,000.00	580.00
Գիշերավարձ		285	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	110,548.65	110.55
	Օրերի քանակ	4	
	Ընդամենը (դրամ)	442,194.60	442.19
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) $	140	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,304.60	54.30
	Օրերի քանակ	5	
	Ընդամենը (դրամ)	271,523.00	271.52
Ընդամենը ծախսեր (դրամ)			1,293.72

Գլխավոր քարտուղար

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ
13.08.2024թ.

Միեր Խաչատրյան

Գևորգ Սարդարյան